# «Կամուրջ»
# Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ

## Ֆինանսական հաշվետվություններ
## 2013թ. դեկտեմբերի 31-ին
## ավարտված տարվա համար

## Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն ........ 3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ........ 5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ........ 6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն ........ 7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն ........ 8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ ........ 9

**KPMG Armenia cjsc**
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

**Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ**
ՀՀ, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

## Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ
Խորհրդին

Մենք իրականացրել ենք «Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Կազմակերպություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Այս ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների նպատակահարմարության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված և KPMG Europe LLP-ի կողմից վերահսկվող ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

*Եզրակացություն*

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Էնդրյու Քոքշել
Տնօրեն

Տիգրան Գասպարյան
Աուդիտի բաժնի ղեկավար

KPMG Armenia cjsc

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
28 մարտի 2014թ.

| | Ծնթգ. | 2013թ. հազ. դրամ | 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտ | 4 | 2,334,897 | 1,663,685 |
| Տոկոսային ծախս | 4 | (286,137) | (228,139) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | | **2,048,760** | **1,435,546** |
| Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից | | (16,546) | (52,905) |
| Այլ գործառնական եկամուտ | | 57,035 | 26,238 |
| Այլ գործառնական ծախսեր | | (24,049) | (14,776) |
| **Գործառնական եկամուտ** | | **2,065,200** | **1,394,103** |
| Արժեզրկումից կորուստներ և վնաս սկզբնական ճանաչումից | 5 | (191,377) | (67,865) |
| Աշխատակազմի գծով ծախսեր | 6 | (678,805) | (545,940) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | 7 | (264,857) | (185,908) |
| **Շահույթ նախքան շահութահարկով հարկումը** | | **930,161** | **594,390** |
| Շահութահարկի գծով ծախս | 8 | (192,037) | (129,646) |
| **Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | | **738,124** | **464,744** |

5-ից 45-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Կազմակերպության ղեկավարության կողմից 2014թ. մարտի 28-ին:

Գագիկ Վարդանյան
Գործադիր տնօրեն

Ալեքսանդր Սահակյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| | Ծնթգ. | 2013թ.<br>հազ. դրամ | 2012թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 9 | 91,866 | 217,646 |
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | 10 | 46,119 | 306,313 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 11 | 10,249,256 | 6,890,601 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 12 | 135,211 | 83,323 |
| Հետաձգված հարկային ակտիվ | 8 | 80,992 | - |
| Այլ ակտիվներ | 13 | 42,108 | 23,784 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **10,645,552** | **7,521,667** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| Վարկեր և փոխառություններ | 14 | 5,008,193 | 3,092,661 |
| Ընթացիկ հարկային պարտավորություն | | 92,693 | 79,432 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 8 | - | 136,673 |
| Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ | | - | 2,205 |
| Այլ պարտավորություններ | 15 | 85,015 | 75,160 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **5,185,901** | **3,386,131** |
| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | | |
| Կանոնադրական կապիտալ | 16 | 4,500,000 | 2,000,000 |
| Լրացուցիչ կապիտալ | | 193,044 | 850,404 |
| Չբաշխված շահույթ | | 766,607 | 1,285,132 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **5,459,651** | **4,135,536** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | | **10,645,552** | **7,521,667** |

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| | Ծնթգ. | 2013թ. հազ. դրամ | 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Ստացված տոկոսներ | | 2,350,556 | 1,640,521 |
| Վճարված տոկոսներ | | (235,127) | (119,800) |
| Զուտ վճարումներ արտարժույթով գործառնությունների գծով | | (900) | (4,447) |
| Ստացված (վճարված) զուտ այլ եկամուտ (ծախս) | | 33,770 | (14,314) |
| Աշխատակազմի և այլ ընդհանուր վարչական ծախսերի վճարումներ | | (882,277) | (687,862) |
| **Գործառնական ակտիվների (աճ) նվազում** | | | |
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | | 260,436 | 764,023 |
| Հաճախորդներին տրված վարկեր | | (3,590,840) | (2,301,818) |
| Այլ ակտիվներ | | (7,987) | (8,818) |
| **Գործառնական պարտավորությունների նվազում** | | | |
| Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ | | (2,205) | (259,396) |
| Այլ պարտավորություններ | | (7,240) | - |
| **Գործառնական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ նախքան շահութահարկի վճարումը** | | **(2,081,814)** | **(991,911)** |
| Վճարված շահութահարկ | | (232,100) | (224,650) |
| **Գործառնական գործունեությունում օգտագործված դրամական միջոցների հոսքեր** | | **(2,313,914)** | **(1,216,561)** |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (86,330) | (35,451) |
| **Ներդրումային գործունեությունում օգտագործված դրամական միջոցների հոսքեր** | | **(86,330)** | **(35,451)** |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Ստացված վարկեր և փոխառություններ | | 2,901,086 | 1,784,665 |
| Վարկերի և փոխառությունների մարում | | (556,157) | (543,652) |
| Վճարված շահութաբաժիններ | | (70,000) | - |
| Բաշխումներ | | - | (28,918) |
| **Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր** | | **2,274,929** | **1,212,095** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում** | | **(125,315)** | **(39,917)** |
| Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (465) | 10,327 |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ | | 217,646 | 247,236 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ** | 9 | **91,866** | **217,646** |

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| | Բաժնետիրական կապիտալ | Լրացուցիչ կապիտալ | Չբաշխված շահույթ | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| Մնացորդը առ 1 հունվարի 2012թ. | 500,000 | 1,474,982 | 849,306 | 2,824,288 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ** | | | | |
| Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար | - | - | 464,744 | 464,744 |
| **Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում** | | | | |
| Թողարկված բաժնետոմսեր՝ ներառյալ 188,620 հազար դրամ հետաձգված հարկը (ծնթգ. 14 և 16) | 1,500,000 | (754,480) | - | 745,520 |
| Լրացուցիչ կապիտալի աճ՝ Բաժնետիրոջից շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն ստանալու արդյունքում՝ առանց 32,522 հազար դրամ հետաձգված հարկի (ծնթգ. 14) | - | 129,902 | - | 129,902 |
| Բաշխումներ | - | - | (28,918) | (28,918) |
| **Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ** | **1,500,000** | **(624,578)** | **(28,918)** | **846,504** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ.** | **2,000,000** | **850,404** | **1,285,132** | **4,135,536** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2013թ. | 2,000,000 | 850,404 | 1,285,132 | 4,135,536 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ** | | | | |
| Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար | - | - | 738,124 | 738,124 |
| **Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում** | | | | |
| Սովորական բաժնետոմսերի անվանական արժեքի աճ | 1,186,649 | - | (1,186,649) | - |
| Բաժնետիրոջից ստացված փոխառության մարում՝ առանց 7,240 հազար դրամ հետաձգված հարկի (ծնթգ. 14) | - | (28,957) | - | (28,957) |
| Սեփական կապիտալի փոխարկված փոխառություն՝ ներառյալ 157,101 հազար դրամ հետաձգված հարկը (ծնթգ. 14 և 16) | 1,313,351 | (628,403) | - | 684,948 |
| Վճարված շահութաբաժիններ | - | - | (70,000) | (70,000) |
| **Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ** | **2,500,000** | **(657,360)** | **(1,256,649)** | **585,991** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.** | **4,500,000** | **193,044** | **766,607** | **5,459,651** |

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# 1 Ներածություն

## (ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ-ն (Կազմակերպություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 2010թ. մարտի 22-ին:

Կազմակերպության սեփականատերն է հանդիսանում Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամը (Բաժնետեր): Բաժնետիրոջ գործունեությունը վերահսկվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից, որը բաղկացած է հինգ անդամից, որոնք, Բաժնետիրոջ կանոնադրության համաձայն, ընտրվում են նախապես սահմանված տարբեր ժամանակահատվածներով՝ Հոգաբարձուների խորհրդի այլ անդամների կողմից: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 20-ում:

2013թ. հունվարի 30-ին Հոգաբարձուների խորհուրդը հաստատեց Կազմակերպության նոր կանոնադրությունը, համաձայն որի Կազմակերպության իրավական կարգավիճակը փոխվեց փակ բաժնետիրական ընկերության:

Կազմակերպությունը վարկային կազմակերպության լիցենզիա է ստացել ՀՀ կենտրոնական բանկից (ՀՀ ԿԲ) 2010թ. ապրիլի 27-ին: Կազմակերպության հիմնական գործունեությունը միկրո և միջին չափի վարկերի տրամադրումն է անհատներին և անհատ ձեռնարկատերերին սպառողական և բիզնես նպատակների համար Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ): Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է ՀՀ ԿԲ-ի կողմից:

Կազմակերպությունն ունի 13 մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Կալենցի փ. 11: Կազմակերպության ակտիվների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում:

## (բ) Հայաստանի գործարար միջավայրը

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Հետևաբար, Կազմակերպության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի Հանրապետության տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

# 2 Պատրաստման հիմունքներ

## (ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

## (բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

## (գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով` հազարների ճշտությամբ:

## (դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում` որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 11-ում` «Հաճախորդներին տրված վարկեր»` վարկերի արժեզրկման գնահատման հետ կապված:

## (ե) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Կազմակերպությունը կիրառել է ստորև բերվող նոր ստանդարտները և ստանդարտների փոփոխությունները, ներառյալ, որպես հետևանք, այլ ստանդարտների փոփոխությունները` 1 հունվարի 2013թ. սկզբնական կիրառման ամսաթվով:

- ՖՀՄՍ 13 *«Իրական արժեքի չափում»*
- *Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ - Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում* (ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)

Վերը նշված փոփոխությունները էական ազդեցություն չունեն ակտիվների և պարտավորությունների ճանաչման և չափման վրա այս ֆինանսական հաշվետվություններում:

Ստորև ներկայացված է փոփոխությունների ազդեցության և բնույթի բացատրությունը:

*Իրական արժեքի չափում*

ՖՀՄՍ 13-ը սահմանում է ընդհանուր հիմունքներ իրական արժեքի չափման և իրական արժեքի չափման վերաբերյալ բացահայտումներ կատարելու համար, այն դեպքերում, երբ նման չափումները պահանջվում կամ թույլատրվում են այլ ՖՀՄՍ-ներով: Մասնավորապես, այն միասնականացնում է իրական արժեքի սահմանումը, հատկորոշելով այն որպես գին, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Այն նաև փոխարինում և լրացնում է այլ ՖՀՄՍ-ներով, այդ թվում` ՖՀՄՍ 7 *«Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ»* ստանդարտով, պահանջվող իրական արժեքի բացահայտումները:

ՖՀՄՍ 13-ի կիրառման արդյունքում Կազմակերպությունն ընդունել է իրական արժեքի նոր սահմանումը: Փոփոխությունն էական ազդեցություն չի ունեցել ակտիվների և պարտավորությունների չափման վրա: Այնուամենայնիվ, Կազմակերպությունը ներառել է ՖՀՄՍ 13-ով պահանջվող նոր բացահայտումները ֆինանսական հաշվետվություններում` առանց համադրելի տեղեկատվության վերահաշվարկի:

*Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ - Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում*

ՖՀՄՍ 7 *«Ֆինանսական գործիքներ. Բացահայտում - Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում»* ստանդարտի փոփոխությունների համաձայն պահանջվում են նոր բացահատումներ այն ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար, որոնք հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ հանդիսանում են հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա:

Քանի որ Կազմակերպությունը չի հաշվանցում ֆինանսական գործիքները ՀՀՄՍ 32 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտի պահանջների համաձայն և չունի հաշվանցման համապատասխան պայմանագրեր, նշված փոփոխությունները չեն կարող ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

# 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ, բացառությամբ ծանոթագրություն 2-ի (ե) կետում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների:

## (ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Կազմարկերպության ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ

սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած շահույթը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

## (բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Կազմակերպությունը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, օգտագործման սահմանափակում չունեցող ընթացիկ հաշիվները և բանկերում տեղաբաշխված կարճաժամկետ ավանդները: Կարճաժամկետ ավանդներն իրենցից ներկայացնում են մինչև երեք ամիս նախնական մարման ժամկետով ավանդներ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

## (գ) Ֆինանսական գործիքներ

### *(i) Դասակարգում*

*Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը* ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնց Կազմակերպությունը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնց Կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Կազմակերպությունը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

### *(ii) Ճանաչում*

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

### *(iii) Չափում*

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

### *(iv) Ամորտիզացված արժեք*

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

### *(v) Շուկայականից տարբեր տոկոսադրույքներով ստացվող/տրամադրվող ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ*

Շուկայականից տարբեր տոկոսադրույքներով ստացվող/տրամադրվող ֆինանսական ակտիվները կամ պարտավորությունները վերաչափվում են ստացման/տրամադրման պահին իրական արժեքով, որն իրենից ներկայացնում է տոկոսագումարների ապագա վճարումները և մայր գումարի մարումը(ները)՝ զեղչված նմանատիպ գործիքների համար գործող շուկայական տոկոսադրույքով: Առաջացող տարբերությունն արտացոլվում է շահույթում կամ վնասում՝ որպես շահույթ կամ վնաս շուկայականից տարբեր տոկոսադրույքներով ստացվող/տրամադրվող ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների գծով: Հետագայում այս ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է ստացման/տրամադրման պահին շահույթի/վնասի ամորտիզացիայի չափով, և համապատասխան եկամուտը/ծախսերն արտացոլվում են տոկոսային եկամտում/ծախսում շահույթի կամ վնասի կազմում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Բաժնետիրոջից շուկայականից տարբեր տոկոսադրույքներով ստացված ֆինանսական պարտավորությունները վերաչափվում են ստացման պահին իրական արժեքով, որն իրենից ներկայացնում է տոկոսագումարների ապագա վճարումները և մայր գումարի մարումը(ները)՝ զեղչված նմանատիպ գործիքների համար գործող շուկայական տոկոսադրույքով: Առաջացող տարբերությունն արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես լրացուցիչ կապիտալ շուկայականից տարբեր տոկոսադրույքներով ստացված ֆինանսական պարտավորությունների գծով:

### *(vi) Իրական արժեքի չափման սկզբունքներ*

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիս բացակայության դեպքում, ամենաբարենպաստ շուկայում, որին Կազմակերպությունը մուտքի հնարավորություն ունի նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Կազմակերպությունը չափում է գործիքի իրական արժեքը` կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով` շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Կազմակերպությունը կիրառում է գնահատման մեթոդներ` դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն` տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Կազմակերպությունը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով` ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով` գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Կազմակերպությունը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը` առաջարկի գնով:

Կազմակերպությունը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումներն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում կատարվել են փոփոխությունները:

### *(vii) Հետագա չափման հետևանքով առաջացող շահույթ և վնաս*

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև` ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

### *(viii) Ապաճանաչում*

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Կազմակերպությունը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Կազմակերպության կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Կազմակերպությունը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Կազմակերպությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Կազմակերպությունը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Եթե Կազմակերպությունը ձեռք է բերում իր սեփական պարտքը, ապա այն դուրս է բերվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, իսկ պարտավորության հաշվեկշռային արժեքի ու վճարված հատուցման տարբերությունը ներառվում է պարտքի ժամանակից շուտ մարման հետևանքով առաջացած շահույթի կամ վնասի կազմում:

Կազմակերպությունը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

### *(ix) Հաշվանցում*

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

## (դ) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Վարձակալված միջոցների բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

| | |
|---|---|
| – համակարգիչներ և կապի սարքավորումներ | 1-ից 5 տարի |
| – փոխադրամիջոցներ | 5 տարի |
| – այլ | 5 տարի |

## (ե) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում՝ կիրառելով գծային մեթոդը 10 տարվա ընթացքում:

## (զ) Արժեզրկում

### *(i) Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ*

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Կազմակերպությունը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն ունի վարկի և դեբիտորական պարտքի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը փոխառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները փոխառուի կողմից, վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայումը, որը Կազմակերպությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, փոխառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող փոխառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող փոխառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Կազմակերպությունը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Կազմակերպությունը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ վարկը և դեբիտորական պարտքը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տեղեկատվության հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են՝ վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ փոխառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման փոխառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, ցանկացած արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Կազմակերպությունն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Կազմակերպությունը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված ցանկացած պահուստները) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

## *(i) Ոչ ֆինանսական ակտիվներ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

## (է) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Կազմակերպությունը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

## (ը) Կանոնադրական կապիտալ

## *(i) Սովորական բաժնետոմսեր*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը և բաժնետոմսերի օպցիոնները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

## *(ii) Շահութաբաժիններ*

Շահութաբաժիններ հայտարարելու և վճարելու Կազմակերպության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Բաժնեմասերի շահութաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

## (բ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ եկամտի միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից առաջացած ժամանակավոր տարբերությունների համար, որոնք ազդեցություն չունեն հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների գումարը չափվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս` հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

## (ժ) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում` կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում` կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտն ու ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում` համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Գործառնական վարձակալության գծով վճարումները ճանաչվում են շահույթում կամ վնասում` կիրառելով գծային մեթոդը վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

### (ի) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն ունենան Կազմակերպության ֆինանսական վիճակի և գործունեության վրա: Կազմակերպությունը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

- ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտի պարտադիր կիրառումը չի պահանջվի 2017թ. հունվարի 1-ից շուտ: Նոր ստանդարտը կհրապարակվի մի քանի փուլերով, և նախատեսվում է, որ ամբողջովին կփոխարինի Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ ՀՀՄՍ 39 *«Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում»*: ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտը հրապարակվել է 2009թ. նոյեմբերին և ներառում է ֆինանսական ակտիվներին վերաբերող պահանջներ: Ֆինանսական պարտավորություններին վերաբերող պահանջները ՖՀՄՍ 9-ում հրապարակվել են 2010թ. հոկտեմբերին: 2013թ. նոյեմբերին ստանդարտում ավելացել է հեջի հաշվառման նոր ընդհանուր մոդել: Ակնկալվում է, որ ստանդարտի մնացած մասերը կհրապարակվեն 2014թ. ընթացքում: Կազմակերպությունն ընդունում է, որ նոր ստանդարտը նախատեսում է բազմաթիվ փոփոխություններ ֆինանսական գործիքների հաշվառման համար և հավանական է, որ այդ փոփոխություններն էական ազդեցություն կունենան ֆինանսական հաշվետվությունների վրա: Այս փոփոխությունների ազդեցությունը կվերլուծվի ստանդարտի հաջորդ փուլերի հրապարակմանը զուգընթաց: Կազմակերպությունը մտադիր չէ կիրառել այս ստանդարտը ժամանակից շուտ:

- Բազմաթիվ *«ՖՀՄՍ-ների կատարելագործումները»* դիտարկվել են առանձին՝ յուրաքանչյուր ստանդարտի հիմունքով: Բոլոր փոփոխությունները, որոնք հանգեցնում են ներկայացման, ճանաչման կամ չափման հաշվառման փոփոխություններին, ուժի մեջ կմտնեն 2014թ. հունվարի 1-ից ոչ շուտ: Կազմակերպությունը դեռ չի վերլուծել այս կատարելագործումների հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:

# 4 Զուտ տոկոսային եկամուտ

| | 2013թ. հազ. դրամ | 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Տոկոսային եկամուտ** | | |
| Հաճախորդներին տրված վարկեր | 2,312,878 | 1,611,921 |
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | 19,633 | 47,518 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 2,386 | 4,246 |
| | 2,334,897 | 1,663,685 |
| **Տոկոսային ծախս** | | |
| Վարկեր և փոխառություններ | 286,137 | 228,139 |

## 5 Արժեզրկումից կորուստներ և վնաս սկզբնական ճանաչումից

| | 2013թ. հազ. դրամ | 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկում | 121,509 | 67,865 |
| Վնաս վարկերի սկզբնական ճանաչումից՝ պայմանավորված վարկերի պայմանների փոփոխությամբ | 69,868 | - |
| | 191,377 | 67,865 |

## 6 Աշխատակազմի գծով ծախսեր

| | 2013թ. հազ. դրամ | 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Աշխատակիցների հատուցումներ և հարակից հարկեր | 678,805 | 545,940 |

## 7 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

| | 2013թ. հազ. դրամ | 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Գործառնական վարձակալության գծով ծախս | 48,821 | 55,326 |
| Վերանորոգման և սպասարկման ծախսեր | 43,117 | 23,143 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 34,442 | 23,200 |
| Տրանսպորտի ծախսեր | 31,941 | 1,085 |
| Կոմունալ և գրասենյակային ծախսեր | 23,470 | 16,087 |
| Անվտանգության ծառայություն | 17,777 | 14,529 |
| Մասնագիտական ծառայություններ | 14,962 | 6,137 |
| Կապի և տեղեկատվական ծառայություններ | 12,107 | 8,596 |
| Հարկեր, բացառությամբ շահութահարկի | 11,250 | 17,742 |
| Գործուղման ծախսեր | 8,617 | 5,718 |
| Գովազդ և շուկայավարում | 5,630 | 4,108 |
| Ապահովագրություն | 770 | 53 |
| Այլ | 11,953 | 10,184 |
| | 264,857 | 185,908 |

## 8 Շահութահարկի գծով ծախս

| | 2013թ. հազ. դրամ | 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Ընթացիկ հարկի գծով ծախս** | | |
| Ընթացիկ տարի | 245,361 | 203,845 |
| **Հետաձգված հարկի գծով օգուտ** | | |
| Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում | (53,324) | (74,199) |
| **Ընդամենը ծախս շահութահարկի գծով** | 192,037 | 129,646 |

2013թ-ին և 2012թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20%:

## Արդյունավետ հարկային դրույքի համադրում

| | 2013թ. հազ. դրամ | % | 2012թ. հազ. դրամ | % |
|---|---|---|---|---|
| Շահույթ մինչև հարկումը | 930,161 | | 594,390 | |
| Շահութահարկի հաշվարկ կիրառելի հարկային դրույքով | 186,032 | 20.0 | 118,878 | 20.0 |
| Չնվազեցվող ծախսեր | 6,005 | 0.6 | 10,768 | 1.8 |
| | 192,037 | 20.6 | 129,646 | 21.8 |

## (ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունները առաջացնում են զուտ հետաձգված հարկային ակտիվներ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Համաձայն գործող օրենսդրության այս նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գործողության ժամկետը սահմանափակ չէ:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2013թ. և 2012թ. ընթացքում:

| հազ. դրամ | Մնացորդը առ 1 հունվարի 2013թ. | Շահույթում կամ վնասում ճանաչված | Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված | Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ. |
|---|---|---|---|---|
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | (1,060) | 798 | - | (262) |
| Հաճախորդներին տրված վարկեր | 25,909 | 46,121 | - | 72,030 |
| Վարկեր և փոխառություններ | (169,824) | 5,483 | 164,341 | - |
| Այլ պարտավորություններ | 8,302 | 922 | - | 9,224 |
| | (136,673) | 53,324 | 164,341 | 80,992 |

| հազ. դրամ | Մնացորդը առ 1 հունվարի 2012թ. | Շահույթում կամ վնասում ճանաչված | Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված | Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ. |
|---|---|---|---|---|
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | (2,668) | 1,608 | - | (1,060) |
| Հաճախորդներին տրված վարկեր | (24,232) | 50,141 | - | 25,909 |
| Վարկեր և փոխառություններ | (345,829) | 19,907 | 156,098 | (169,824) |
| Այլ պարտավորություններ | 5,759 | 2,543 | - | 8,302 |
| | (366,970) | 74,199 | 156,098 | (136,673) |

## 9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| | 2013թ.<br>հազ. դրամ | 2012թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Կանխիկը դրամարկղում | 47,201 | 6,643 |
| Ընթացիկ հաշիվներ 10 խոշորագույն հայկական բանկերում | 44,665 | 211,003 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում** | **91,866** | **217,646** |

Դրամական միջոցները և դրանց համարժեքները արժեզրկված կամ ժամկետանց չեն:

36,780 հազար դրամ հաշվեկշռային արժեքով ընթացիկ հաշիվը գրավադրված է բանկից ստացված փոխառության դիմաց (2012թ-ին նման գրավադրում չի եղել):

## 10 Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ

| | 2013թ.<br>հազ. դրամ | 2012թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| 10 խոշորագույն հայկական բանկեր | 46,119 | 306,313 |
| **Ընդամենը բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ** | **46,119** | **306,313** |

Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

## 11 Հաճախորդներին տրված վարկեր

| | 2013թ.<br>հազ. դրամ | 2012թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Բիզնես վարկեր | 1,308,932 | 497,566 |
| Գյուղատնտեսական վարկեր | 5,531,031 | 3,965,917 |
| Բնակարանային պայմանների բարելավման վարկեր | 2,858,212 | 2,476,661 |
| Սպառողական վարկեր | 731,775 | 50,497 |
| **Հաճախորդներին տրված համախառն վարկեր** | **10,429,950** | **6,990,641** |
| Արժեզրկման գծով պահուստ | (180,694) | (100,040) |
| **Հաճախորդներին տրված զուտ վարկեր** | **10,249,256** | **6,890,601** |

Ստորև ներկայացված է հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման գծով պահուստի շարժը 2013թ. ընթացքում:

| | հազ. դրամ |
|---|---|
| Մնացորդը տարեսկզբին | 100,040 |
| Զուտ ծախս | 121,509 |
| Զուտ դուրսգրումներ | (40,855) |
| **Մնացորդը տարեվերջին** | **180,694** |

Ստորև ներկայացված է հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման գծով պահուստի շարժը 2012թ. ընթացքում:

| | հազ. դրամ |
|---|---|
| Մնացորդը տարեսկզբին | 53,916 |
| Զուտ ծախս | 67,865 |
| Զուտ դուրսգրումներ | (21,741) |
| **Մնացորդը տարեվերջին** | **100,040** |

## (ա) Հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | Համախառն վարկեր հազ. դրամ | Արժեզրկման պահուստ հազ. դրամ | Զուտ վարկեր հազ. դրամ | Համախառն վարկերի արժեզրկման պահուստ % |
|---|---|---|---|---|
| **Բիզնես վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 1,285,686 | 11,057 | 1,274,629 | 0.9% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 10,425 | 1,816 | 8,609 | 17.4% |
| - 30-89 օր ժամկետանց | 2,041 | 1,307 | 734 | 64.0% |
| - 90-179 օր ժամկետանց | 6,435 | 4,141 | 2,294 | 64.4% |
| - ավելի քան 180 օր ժամկետանց | 4,345 | 4,239 | 106 | 97.6% |
| **Ընդամենը բիզնես վարկեր** | **1,308,932** | **22,560** | **1,286,372** | **1.7%** |
| **Գյուղատնտեսական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 5,460,488 | 41,500 | 5,418,988 | 0.8% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 3,241 | 648 | 2,593 | 20.0% |
| - 30-89 օր ժամկետանց | 40,192 | 25,273 | 14,919 | 62.9% |
| - 90-179 օր ժամկետանց | 20,721 | 16,280 | 4,441 | 78.6% |
| - ավելի քան 180 օր ժամկետանց | 6,389 | 6,200 | 189 | 97.0% |
| **Ընդամենը գյուղատնտեսական վարկեր** | **5,531,031** | **89,901** | **5,441,130** | **1.6%** |
| **Բնակարանային պայմանների բարելավման վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 2,791,625 | 21,228 | 2,770,397 | 0.8% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 19,841 | 3,962 | 15,879 | 20.0% |
| - 30-89 օր ժամկետանց | 20,924 | 13,165 | 7,759 | 62.9% |
| - 90-179 օր ժամկետանց | 11,073 | 8,699 | 2,374 | 78.6% |
| - ավելի քան 180 օր ժամկետանց | 14,749 | 14,331 | 418 | 97.2% |
| **Ընդամենը բնակարանային պայմանների բարելավման վարկեր** | **2,858,212** | **61,385** | **2,796,827** | **2.1%** |
| **Սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 728,989 | 6,269 | 722,720 | 0.9% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 2,589 | 451 | 2,138 | 17.4% |
| - 30-89 օր ժամկետանց | 197 | 128 | 69 | 65.0% |
| **Ընդամենը սպառողական վարկեր** | **731,775** | **6,848** | **724,927** | **0.9%** |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր** | **10,429,950** | **180,694** | **10,249,256** | **1.7%** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | Համախառն վարկեր հազ. դրամ | Արժեզրկման պահուստ հազ. դրամ | Զուտ վարկեր հազ. դրամ | Համախառն վարկերի արժեզրկման պահուստ % |
|---|---|---|---|---|
| **Բիզնես վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 486,391 | 4,668 | 481,723 | 1.0% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 2,308 | 402 | 1,906 | 17.4% |
| - 30-89 օր ժամկետանց | 1,306 | 837 | 469 | 64.1% |
| - 90-179 օր ժամկետանց | 2,895 | 1,863 | 1,032 | 64.4% |
| - ավելի քան 180 օր ժամկետանց | 4,666 | 4,555 | 111 | 97.6% |
| **Ընդամենը բիզնես վարկեր** | **497,566** | **12,325** | **485,241** | **2.5%** |
| **Գյուղատնտեսական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 3,945,372 | 40,205 | 3,905,167 | 1.0% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 2,847 | 570 | 2,277 | 20.0% |
| - 30-89 օր ժամկետանց | 7,950 | 4,999 | 2,951 | 62.9% |
| - 90-179 օր ժամկետանց | 9,748 | 7,659 | 2,089 | 78.6% |
| **Ընդամենը գյուղատնտեսական վարկեր** | **3,965,917** | **53,433** | **3,912,484** | **1.3%** |
| **Բնակարանային պայմանների բարելավման վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 2,453,730 | 20,978 | 2,432,752 | 0.9% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 10,164 | 2,107 | 8,057 | 20.7% |
| - 30-89 օր ժամկետանց | 1,645 | 1,077 | 568 | 65.5% |
| - 90-179 օր ժամկետանց | 5,988 | 4,704 | 1,284 | 78.6% |
| - ավելի քան 180 օր ժամկետանց | 5,134 | 4,982 | 152 | 97.0% |
| **Ընդամենը բնակարանային պայմանների բարելավման վարկեր** | **2,476,661** | **33,848** | **2,442,813** | **1.4%** |
| **Սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 50,497 | 434 | 50,063 | 0.9% |
| **Ընդամենը սպառողական վարկեր** | **50,497** | **434** | **50,063** | **0.9%** |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր** | **6,990,641** | **100,040** | **6,890,601** | **1.4%** |

## (բ) Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրությունները և դատողությունները

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի անհատական հիմունքով էական հանդիսացող վարկեր, այդ իսկ պատճառով, ղեկավարությունը հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումը որոշում է արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման հիման վրա:

Հաշվի առնելով իր գործունեության կարճատև պատմությունը՝ Կազմակերպությունը հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումը որոշելիս օգտագործում է նմանատիպ վարկերի գծով համանման կազմակերպությունների վնաս կրելու փորձը: Եթե Կազմակերպությունը հիմնվեր վարկերի գծով վնաս կրելու և միգրացիայի դրույքների հետ կապված իր սեփական փորձի վրա, ապա արժեզրկման գծով պահուստը ցածր կլիներ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ճանաչված արժեզրկման գծով պահուստից:

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս Կազմակերպությունն առաջնորդվում է այն հիմնական ենթադրությամբ, որ Կազմակերպության արժեզրկումից կորուստները մոտավորապես հավասար կլինեն Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ գործիքների գծով վարկային կազմակերպությունների և բանկերի կողմից կրած արժեզրկումից միջին կորուստներին:

Այս գնահատումների փոփոխություններն ազդեցություն կունենան վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա: Եթե դրամական միջոցների ակնկալվող հոսքերի զուտ ներկա արժեքը փոփոխվեր մեկ տոկոսով, ապա հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման գծով ընդհանուր պահուստի գումարը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազեր/կավելանար 102,492 հազար դրամով (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազեր/կավելանար 68,906 հազար դրամով):

## (գ) Գրավի և այլ ապահովության վերլուծություն

Հաճախորդներին տրված վարկերի համար հիմնականում ապահովություն են ծառայում անհատ ձեռնարկատերերի կամ Կազմակերպությունից վարկեր ստանալու նպատակով ձևավորված փոխառուների խմբի անդամների կողմից տրված անձնական երաշխիքները: Անձնական երաշխիքներն առանձին կերպով հաշվի չեն առնվել վարկերի արժեզրկումը գնահատելիս:

## (դ) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը ծավալել են տնտեսության հետևյալ ճյուղերում.

| | 2013թ.<br>հազ. դրամ | 2012թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Գյուղատնտեսություն | 5,531,031 | 3,965,917 |
| Սպառողական վարկեր (բնակարանային պայմանների բարելավման և այլ սպառողական վարկեր) | 3,589,987 | 2,527,158 |
| Առևտուր | 1,012,380 | 379,544 |
| Արդյունաբերություն | 157,779 | 55,542 |
| Սպասարկման ոլորտ | 77,493 | 42,185 |
| Այլ | 61,280 | 20,295 |
| | 10,429,950 | 6,990,641 |
| Արժեզրկման գծով պահուստ | (180,694) | (100,040) |
| | 10,249,256 | 6,890,601 |

## (ե) Վարկային ռիսկին ենթարկվածություն

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի փոխառուներ կամ փոխկապակցված փոխառուների խմբեր (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նման փոխառուներ չկային), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

## (զ) Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 17-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը: Քանի որ Կազմակերպությունը տրամադրում է կարճաժամկետ վարկեր, հավանական է, որ դրանցից շատերը կերկարաձգվեն ժամկետի ավարտից հետո: Այդ իսկ պատճառով, վարկային պորտֆելի իրական ժամկետայնությունը կարող է զգալիորեն ավելի երկար լինել պայմանագրային պայմանների հիման վրա որոշված ժամկետայնությունից:

# 12 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

| հազ. դրամ | Համակարգիչներ և կապի սարքավորումներ | Փոխադրա-միջոցներ | Այլ հիմնական միջոցներ | Ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական արժեք** | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2013թ. | 34,530 | 34,289 | 36,833 | 11,097 | 116,749 |
| Ավելացումներ | 38,394 | 33,100 | 10,254 | 4,582 | 86,330 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.** | **72,924** | **67,389** | **47,087** | **15,679** | **203,079** |
| **Մաշվածություն և ամորտիզացիա** | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2013թ. | 14,341 | 5,925 | 9,505 | 3,655 | 33,426 |
| Տարվա մաշվածություն և ամորտիզացիա | 12,957 | 9,524 | 8,119 | 3,842 | 34,442 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.** | **27,298** | **15,449** | **17,624** | **7,497** | **67,868** |
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2013թ.** | 45,626 | 51,940 | 29,463 | 8,182 | 135,211 |
| **Առ 1 հունվարի 2013թ.** | **20,189** | **28,364** | **27,328** | **7,442** | **83,323** |

| հազ. դրամ | Համակարգիչներ և կապի սարքավորումներ | Փոխադրա-միջոցներ | Այլ հիմնական միջոցներ | Ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական արժեք** | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2012թ. | 22,888 | 28,689 | 24,678 | 6,527 | 82,782 |
| Ավելացումներ | 11,642 | 5,600 | 12,155 | 4,570 | 33,967 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ.** | **34,530** | **34,289** | **36,833** | **11,097** | **116,749** |
| **Մաշվածություն և ամորտիզացիա** | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2012թ. | 5,400 | - | 3,383 | 1,443 | 10,226 |
| Տարվա մաշվածություն և ամորտիզացիա | 8,941 | 5,925 | 6,122 | 2,212 | 23,200 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ.** | **14,341** | **5,925** | **9,505** | **3,655** | **33,426** |
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2012թ.** | 20,189 | 28,364 | 27,328 | 7,442 | 83,323 |
| **Առ 1 հունվարի 2012թ.** | **17,488** | **28,689** | **21,295** | **5,084** | **72,556** |

# 13 Այլ ակտիվներ

| | 2013թ. հազ. դրամ | 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Կանխավճարներ մատակարարներին | 34,173 | 19,564 |
| Կանխավճար շահութահարկի գծով | 5,973 | 1,917 |
| Նյութեր և պաշարներ | 1,910 | 1,867 |
| Կանխավճարներ հարկերի գծով, բացառությամբ շահութահարկի | 52 | 436 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ** | **42,108** | **23,784** |

# 14 Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Կազմակերպության տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների վերաբերյալ: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկին Կազմակերպության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 17-ում:

| | 2013թ. հազ. դրամ | 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | |
| Այլ կազմակերպություններ | 2,741,675 | 2,210,804 |
| Վարկ Բաժնետերից | - | 519,234 |
| | **2,741,675** | **2,730,038** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | |
| Բանկեր և այլ կազմակերպություններ | 2,266,518 | 362,623 |
| | **2,266,518** | **362,623** |
| | **5,008,193** | **3,092,661** |

## Պարտքերի մարման պայմանները և ժամանակացույցը

Ստորև ներկայացված են գործող վարկերի պայմանները:

| | | | | 31 դեկտեմբերի 2013թ. | | 31 դեկտեմբերի 2012թ. | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հազ. դրամ | Արժույթ | Անվանակ. տոկոսադր. | Մարման տարի | Անվանակ. արժեք | Հաշվեկշռ. արժեք | Անվանակ. արժեք | Հաշվեկշռ. արժեք |
| Բաժնետեր | ՀՀ դրամ | 0.00% | 2020 | - | - | 1,368,351 | 519,234 |
| Այլ կազմակերպություններ | ԱՄՆ դոլար | 6.4%-7.0% | 2014-2016 | 1,029,834 | 1,029,834 | 671,271 | 671,271 |
| Այլ կազմակերպություններ | ԱՄՆ դոլար | 7.3% | 2014 | 826,674 | 826,674 | 822,403 | 822,403 |
| Այլ կազմակերպություններ | ԱՄՆ դոլար | 6.5%-7% | 2014-2016 | 568,210 | 568,210 | 262,628 | 262,628 |
| Այլ կազմակերպություններ | ՀՀ դրամ | 10.0% | 2014-2020 | 466,460 | 466,460 | 194,847 | 194,847 |
| Այլ կազմակերպություններ | ԱՄՆ դոլար | 4.0% | 2015-2020 | 465,842 | 465,842 | 35,978 | 35,978 |
| Այլ կազմակերպություններ | Եվրո | 7.8% | 2017 | 268,990 | 268,990 | 255,817 | 255,817 |
| Այլ կազմակերպություններ | ԱՄՆ դոլար | 7.3% | 2014 | 204,319 | 204,319 | 204,016 | 204,016 |
| Այլ կազմակերպություններ | ԱՄՆ դոլար | 6.5% | 2015 | 202,974 | 202,974 | - | - |
| Այլ կազմակերպություններ | ԱՄՆ դոլար | 6.4% | 2015 | 123,826 | 123,826 | - | - |
| Այլ կազմակերպություններ | ՀՀ դրամ | 4.0% | 2020 | 37,876 | 37,876 | - | - |
| Բանկեր | ՀՀ դրամ | 14.0% | 2014-2015 | 813,188 | 813,188 | 21,396 | 21,396 |
| Բանկեր | ԱՄՆ դոլար | 10.2% | 2013 | - | - | 105,071 | 105,071 |
| | | | | 5,008,193 | 5,008,193 | 3,941,778 | 3,092,661 |

Բաժնետերը տրամադրել է վարկերը 2012թ., 2011թ. և 2010թ.՝ զրոյական տոկոսադրույքով: Վարկերը ճանաչվել են իրական արժեքով՝ կիրառելով նմանատիպ գործիքների համար գործող շուկայական տոկոսադրույքները: Վարկերի սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և անվանական արժեքի տարբերությունը ճանաչվել է որպես լրացուցիչ կապիտալ՝ առանց հետաձգված հարկի:

Բաժնետիրոջ որոշման համաձայն՝ 2013թ. մարտի 28-ին Բաժնետերից ստացված 1,313,351 հազար դրամ անվանական արժեքով և 527,846 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վարկը փոխարկվել է սեփական կապիտալի (ծանոթագրություն 16): Բացի այդ, 2013թ. ընթացքում Բաժնետերից ստացված 55,000 հազար դրամ անվանական գումարով և 18,803 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վարկը մարվել է նախատեսված ժամկետից շուտ՝ կանխիկով:

Բաժնետիրոջ որոշման համաձայն՝ 2012թ. մարտի 23-ին 1,500,000 հազար դրամ անվանական արժեքով և 556,900 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վարկը փոխարկվել է 15,000 սովորական բաժնետոմսի (ծանոթագրություն 16):

## Վարկերի և փոխառությունների կենտրոնացում

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի երեք պայմանագրային կողմ (2012թ-ին՝ երեք պայմանագրային կողմ), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների հաշվեկշռային արժեքը կազմում է 2,424,718 հազար դրամ (2012թ-ին՝ 2,012,908 հազար դրամ):

# 15 Այլ պարտավորություններ

| | 2013թ. հազ. դրամ | 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Հաշվեգրված ծախսեր | 46,120 | 41,508 |
| Աշխատավարձ և աշխատակիցներին վճարվելիք այլ գումարներ | 8,306 | 8,016 |
| Այլ | 8,392 | 8,955 |
| **Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ** | **62,818** | **58,479** |
| | | |
| Այլ վճարվելիք հարկեր | 22,197 | 16,681 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | **22,197** | **16,681** |
| | **85,015** | **75,160** |

# 16 Բաժնետիրական կապիտալ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 20,000 (2012թ-ին՝ 20,000) բաժնետոմսից: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 225 հազար դրամ (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 100 հազար դրամ):

2013թ. ընթացքում Կազմակերպությունը համալրել է բաժնետիրական կապիտալը 2,500,000 հազար դրամով՝ ավելացնելով բաժնետոմսերի անվանական արժեքը: Բաժնետոմսերի անվանական արժեքն ավելացվել է կատարելով 1,186,649 հազար դրամ գումարով փոխանցում չբաշխված շահույթից և սեփական կապիտալի փոխարկելով Բաժնետերից ստացված 1,313,351 հազար դրամ անվանական արժեքով փոխառությունները:

2012թ. ընթացքում թողարկվել է 15,000 բաժնետոմս անվնական արժեքով, որի արդյունքում բաժնետիրական կապիտալը համալրվել է 1,500,000 հազար դրամով:

Բաժնեմասերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահութաբաժինները և քվեարկել Կազմակերպության տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնեմաս՝ մեկ ձայն սկզբունքով:

2013թ. ընթացքում հայտարարվել և Բաժնետերին են վճարվել 70,000 հազար դրամ գումարով շահութաբաժիններ (3.5 հազար դրամ մեկ բաժնետոմսի համար) (2012թ-ին շահութաբաժիններ չեն հայտարարվել):

# 17 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է վարկավորման ոլորտի համար և Կազմակերպության գործառնությունների կարևոր տարր է: Շուկայական ռիսկը, վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց Կազմակերպությունը ենթարկվում է իր գործունեությունն իրականացնելիս:

## (ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև առավել խոշոր գործառնությունների հաստատման համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Կազմակերպության գործունեությունն ապահովելու համար: Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման համար, այն նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, գնահատման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ղեկավարությունն ուղղակիորեն հաշվետու է Խորհրդին:

Ռիսկի թե արտաքին, թե ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Կազմակերպության կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Հատուկ ուշադրություն է դարձվում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության որոշմանը:

## (բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների տատանումների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Կազմակերպությունը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքների ժամկետայնության և արտարժույթի դիրքերի գծով: Վերջիններս կանոնավոր կերպով վերահսկվում, ուսումնասիրվում և հաստատվում են ղեկավարության կողմից:

### *(i) Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Կազմակերպությունն ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

#### *Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն*

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների տարբերությունների մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | Մինչև 3 ամիս | 3-6 ամիս | 6-12 ամիս | 1-5 տարի | Ավելի քան 5 տարի | Ոչ տոկոսակիր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 31 դեկտեմբերի 2013թ. | | | | | | | |
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 44,665 | - | - | - | - | 47,201 | 91,866 |
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | 46,119 | - | - | - | - | - | 46,119 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 1,336,427 | 1,466,049 | 4,068,887 | 3,362,588 | 15,305 | - | 10,249,256 |
| | 1,427,211 | 1,466,049 | 4,068,887 | 3,362,588 | 15,305 | 47,201 | 10,387,241 |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 94,247 | 501,428 | 1,670,843 | 2,698,937 | 42,738 | - | 5,008,193 |
| Տարբերություն | 1,332,964 | 964,621 | 2,398,044 | 663,651 | (27,433) | 47,201 | 5,379,048 |
| 31 դեկտեմբերի 2012թ. | | | | | | | |
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 211,003 | - | - | - | - | 6,643 | 217,646 |
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | 306,313 | - | - | - | - | - | 306,313 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 1,058,895 | 1,154,992 | 3,258,251 | 1,418,463 | - | - | 6,890,601 |
| | 1,576,211 | 1,154,992 | 3,258,251 | 1,418,463 | - | 6,643 | 7,414,560 |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 120,864 | 191,821 | 50,902 | 2,209,840 | 519,234 | - | 3,092,661 |
| Տարբերություն | 1,455,347 | 963,171 | 3,207,349 | (791,377) | (519,234) | 6,643 | 4,321,899 |

### *Միջին տոկոսադրույքներ*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

| | 2013թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք | | | 2012թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ | ԱՄՆ դոլար | Եվրո | ՀՀ | ԱՄՆ դոլար | Եվրո |
| **Տոկոսակիր ակտիվներ** | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | | | | | |
| - Ընթացիկ հաշիվներ | 1.0% | 1.0% | 1.0% | 1.0% | 1.0% | 1.0% |
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | 13.6% | 7.3% | - | - | 6.2% | - |
| Հաճախորդներին տրված վարկեր | 33.4% | 16.4% | - | 35.3% | 15.2% | - |
| **Տոկոսակիր** | | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | | | | | | |
| - Վարկեր այլ կազմակերպություններից | 9.6% | 6.6% | 7.8% | 10.5% | 8.1% | 7.7% |
| - Վարկեր բանկերից | 14.0% | - | - | 14.0% | 10.2% | - |
| - Վարկեր Բաժնետերից | - | - | - | 15.0% | - | - |

### *Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն*

Տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով: Ստորև ներկայացվում է շուկայական տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի ու 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

| | 2013թ. Շահույթ կամ վնաս և սեփական կապիտալ հազ. դրամ | 2012թ. Շահույթ կամ վնաս և սեփական կապիտալ հազ. դրամ |
|---|---|---|
| 100 բկ զուգահեռ նվազում | (20,356) | (22,650) |
| 100 բկ զուգահեռ աճ | 20,356 | 22,650 |

## *(ii) Արտարժույթի ռիսկ*

Կազմակերպությունն ունի ԱՄՆ դոլարով և եվրոյով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 45,850 | 45,572 | 444 | 91,866 |
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | - | 46,119 | - | 46,119 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 8,537,134 | 1,712,122 | - | 10,249,256 |
| **Ընդամենը ակտիվներ** | **8,582,984** | **1,803,813** | **444** | **10,387,241** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 1,317,524 | 3,421,679 | 268,990 | 5,008,193 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 62,818 | - | - | 62,818 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **1,380,342** | **3,421,679** | **268,990** | **5,071,011** |
| **Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2013թ.** | **7,202,642** | **(1,617,866)** | **(268,546)** | **5,316,230** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 13,759 | 203,813 | 74 | 217,646 |
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | - | 306,313 | - | 306,313 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 6,786,203 | 104,398 | - | 6,890,601 |
| **Ընդամենը ակտիվներ** | **6,799,962** | **614,524** | **74** | **7,414,560** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 735,477 | 2,101,272 | 255,912 | 3,092,661 |
| Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ | 2,205 | - | - | 2,205 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 58,479 | - | - | 58,479 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **796,161** | **2,101,272** | **255,912** | **3,153,345** |
| **Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2012թ.** | **6,003,801** | **(1,486,748)** | **(255,838)** | **4,261,215** |

2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Կազմակերպությունը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

| | 2013թ. | 2012թ. |
|---|---|---|
| | Շահույթ կամ վնաս և սեփական կապիտալ հազ. դրամ | Շահույթ կամ վնաս և սեփական կապիտալ հազ. դրամ |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% արժևորում ԱՄՆ դոլարի նկատմամբ | 161,787 | 148,675 |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% արժևորում եվրոյի նկատմամբ | 26,855 | 25,584 |

ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կունենա գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն ԱՄՆ դոլարով և եվրոյով արտահայտված վերը նշված գումարների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

## (գ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ վարկառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Կազմակերպության նկատմամբ: Կազմակերպությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր ճանաչված ֆինանսական ակտիվների հետ կապված վարկային ռիսկը կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները: Վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Խորհրդի կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- վարկային փաստաթղթերի պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական մոնիտորինգի ընթացակարգերը:

Վարկային ռիսկն ամենակարևոր ռիսկն է Կազմակերպության գործունեության համար, այդ իսկ պատճառով, ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում այդ ռիսկի կառավարմանը: Վարկային ռիսկը հիմնականում առաջանում է վարկավորման գործունեության հետ կապված՝ հանգեցնելով վարկերի ու փոխատվությունների տրամադրմանը: Վարկային ռիսկը կառավարվում և վերահսկվում է վարկային բաժնի մենեջերների և Մոնիտորինգի բաժնի կողմից, իսկ վարկային ռիսկի վերաբերյալ հաշվետվությունները կանոնավոր կերպով ներկայացվում են ղեկավարությանը:

Վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն աստիճանը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

| | 2013թ. հազ. դրամ | 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | |
| - Ընթացիկ հաշիվներ | 44,665 | 211,003 |
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | 46,119 | 306,313 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 10,249,256 | 6,890,601 |
| **Վարկային ռիսկի ընդհանուր առավելագույն չափը** | **10,340,040** | **7,407,917** |

Բանկերում տեղաբաշխված միջոցների և հաճախորդներին տրված վարկերի դիմաց որպես կանոն գրավ չի պահանջվում, բացառությամբ ծանոթագրություն 11 (գ) կետում ներկայացվածի:

Հաճախորդներին տրված վարկերի գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 11-ում:

2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի այնպիսի պարտապաններ, որոնց հետ կապված վարկային ռիսկը գերազանցում է վարկային ռիսկի ընդհանուր առավելագույն չափի 10%-ը:

## (դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Կազմակերպությունը դժվարություններ կունենա ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ու տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման առանցքային գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար` պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Կազմակերպության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները` դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները կատարելու համար:

Կազմակերպությունը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է վարկավորող կազմակերպություններից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը` իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների չզեղչված հոսքերի բաշխումը ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակում ներկայացված արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է դրամական միջոցների պայմանագրային չզեղչված հոսքերը ֆինանսական պարտավորությունների գծով: Այս ֆինանսական պարտավորությունների գծով ակնկալվող դրամական միջոցների հոսքերը կարող են էականորեն տարբերվել այս վերլուծության տվյալներից:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 6 ամիս | 6-ից 12 ամիս | Ավելի քան 1 տարի | Արտահոսքի ընդհանուր համախառն գումար | Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Ոչ ածանցյալ պարտավորություններ** | | | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 45,843 | 83,973 | 608,541 | 1,842,722 | 3,072,302 | 5,653,381 | 5,008,193 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 19,981 | 6,567 | 16,570 | 19,700 | - | 62,818 | 62,818 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **65,824** | **90,540** | **625,111** | **1,862,422** | **3,072,302** | **5,716,199** | **5,071,011** |

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 6 ամիս | 6-ից 12 ամիս | Ավելի քան 1 տարի | Արտահոսքի ընդհանուր համախառն գումար | Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Ոչ ածանցյալ պարտավորություններ** | | | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 18,643 | 108,794 | 255,478 | 138,001 | 3,813,780 | 4,334,696 | 3,092,661 |
| Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ | 2,205 | - | - | - | - | 2,205 | 2,205 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | - | - | 58,479 | - | - | 58,479 | 58,479 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **20,848** | **108,794** | **313,957** | **138,001** | **3,813,780** | **4,395,380** | **3,153,345** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 12 ամիս | 1-ից 5 տարի | Ավելի քան 5 տարի | Անժամկետ | Ժամկետանց | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ոչ ածանցյալ ակտիվներ** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 91,866 | - | - | - | - | - | - | 91,866 |
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | 21,219 | 24,900 | - | - | - | - | - | 46,119 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 418,118 | 904,109 | 5,534,936 | 3,362,588 | 15,305 | - | 14,200 | 10,249,256 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | 135,211 | - | 135,211 |
| Հետաձգված հարկային ակտիվ | - | - | - | - | - | 80,992 | - | 80,992 |
| Այլ ակտիվներ | 3,177 | 22,603 | 14,418 | - | - | 1,910 | - | 42,108 |
| **Ընդամենը ակտիվներ** | **534,380** | **951,612** | **5,549,354** | **3,362,588** | **15,305** | **218,113** | **14,200** | **10,645,552** |
| **Ոչ ածանցյալ պարտավորություններ** | | | | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 40,955 | 53,291 | 2,172,272 | 2,698,937 | 42,738 | - | - | 5,008,193 |
| Ընթացիկ հարկային պարտավորություն | - | - | 92,693 | - | - | - | - | 92,693 |
| Այլ պարտավորություններ | 42,179 | 6,566 | 36,270 | - | - | - | - | 85,015 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **83,134** | **59,857** | **2,301,235** | **2,698,937** | **42,738** | **-** | **-** | **5,185,901** |
| **Զուտ դիրք** | **451,246** | **891,755** | **3,248,119** | **663,651** | **(27,433)** | **218,113** | **14,200** | **5,459,651** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 12 ամիս | 1-ից 5 տարի | Ավելի քան 5 տարի | Անժամկետ | Ժամկետանց | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ոչ ածանցյալ ակտիվներ** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 217,646 | - | - | - | - | - | - | 217,646 |
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | 306,313 | - | - | - | - | - | - | 306,313 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 331,530 | 719,918 | 4,413,244 | 1,418,462 | - | - | 7,447 | 6,890,601 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | 83,323 | - | 83,323 |
| Այլ ակտիվներ | 1,373 | 13,046 | 7,448 | 1,917 | - | - | - | 23,784 |
| **Ընդամենը ակտիվներ** | **856,862** | **732,964** | **4,420,692** | **1,420,379** | **-** | **83,323** | **7,447** | **7,521,667** |
| **Ոչ ածանցյալ պարտավորություններ** | | | | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 15,933 | 104,931 | 242,723 | 2,209,840 | 519,234 | - | - | 3,092,661 |
| Ընթացիկ հարկային պարտավորություն | - | - | 79,432 | - | - | - | - | 79,432 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | - | - | - | - | - | 136,673 | - | 136,673 |
| Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ | 2,205 | - | - | - | - | - | - | 2,205 |
| Այլ պարտավորություններ | 33,652 | - | 41,508 | - | - | - | - | 75,160 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **51,790** | **104,931** | **363,663** | **2,209,840** | **519,234** | **136,673** | **-** | **3,386,131** |
| **Զուտ դիրք** | **805,072** | **628,033** | **4,057,029** | **(789,461)** | **(519,234)** | **(53,350)** | **7,447** | **4,135,536** |

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն օգտագործում է ստորև ներկայացված չօգտագործվող վարկային գծերը՝ կարճաժամկետ ֆինանսական կարիքները բավարարելու նպատակով:

- 184,000 հազար դրամ (31 դեկտեմբերի 2012թ.՝ բացակայում էր) գումարով օվերդրաֆտ, որի համար ապահովություն է ծառայում Կազմակերպության ընթացիկ հաշվի շարժը: Օվերդրաֆտի գծով կիրառվում է տարեկան 14% տոկոսադրույք, տոկոսները ենթակա են վճարման ամսական կտրվածքով:

- 8,461 հազար դրամ (31 դեկտեմբերի 2012թ.՝ 120,000 հազար դրամ) գումարով օվերդրաֆտ, որի համար ապահովություն է ծառայում Կազմակերպության ընթացիկ հաշվի շարժը: Օվերդրաֆտի գծով կիրառվում է տարեկան 14% տոկոսադրույք, տոկոսները ենթակա են վճարման ամսական կտրվածքով:

# 18 Կապիտալի կառավարում

Կազմակերպության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Կազմակերպությունը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների կապիտալի համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն վարկային կազմակերպությունները պետք է ապահովեն նվազագույն բաժնետիրական կապիտալ և ընդհանուր կապիտալ 150,000 հազար դրամի չափով: 2013թ. և 2012թ. ընթացքում Կազմակերպության կապիտալի չափը համապատասխանում էր սահմանված չափին:

Կազմակերպության պարտքի և կապիտալի հարաբերակցությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն էր.

| | 2013թ. հազ. դրամ | 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Ընդամենը պարտավորություններ** | 5,185,901 | 3,386,131 |
| Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքներ | 91,866 | 217,646 |
| Զուտ պարտքը | 5,094,035 | 3,168,485 |
| | | |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | 5,459,651 | 4,135,536 |
| Պարտքի և կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ | 0.93 | 0.77 |

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Կազմակերպության մոտեցումը չի փոփոխվել:

# 19 Պայմանական դեպքեր

## (ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Կազմակերպությունն ամբողջությամբ ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Կազմակերպության տարածքում տեղի ունեցած կամ նրա գործունեությունը վերաբերող պատահարներից: Քանի դեռ Կազմակերպությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

## (բ) Դատական վարույթներ

Կազմակերպության ղեկավարությունը տեղյակ չէ Կազմակերպության դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

### (գ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմինները իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել Կազմակերպության ֆինանսական վիճակի համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

## 20 Գործարքներ կապակցված կողմերի հետ

### (ա) Վերահսկողություն

Կազմակերպության մայր կազմակերպությունն է Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամը: Կազմակերպության վերջնական վերահսկող կողմն է հանդիսանում Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը, որը բաղկացած է հինգ անդամից, որոնք ընտրվում են նախապես սահմանված տարբեր ժամանակահատվածներով՝ Հոգաբարձուների խորհրդի այլ անդամների կողմից:

### (բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի անդամների և ղեկավարության հետ

Ստորև ներկայացված է աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

| | 2013թ.<br>հազ. դրամ | 2012թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Աշխատակիցների հատուցումներ և հարակից հարկեր | 110,267 | 73,352 |

Ստորև ներկայացված են 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առանցքային ղեկավար անձնակազմի հետ գործարքների մնացորդները և միջին տոկոսադրույքները:

| | 2013թ.<br>հազ. դրամ | Միջին տոկոսադրույք, % | 2012թ.<br>հազ. դրամ | Միջին տոկոսադրույք, % |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն** | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր | 2,307 | 10% | - | - |

Ստորև ներկայացված է առանցքային ղեկավար անձնակազմի հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | 2013թ. հազ. դրամ | 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Շահույթ կամ վնաս** | | |
| Տոկոսային եկամուտ | 225 | - |
| | 225 | - |

## (գ) Գործարքներ Բաժնետիրոջ հետ

Ստորև ներկայացված են 2013թ. շահույթում կամ վնասում Բաժնետիրոջ հետ իրականացված գործարքների գծով արտացոլված գումարները:

| | հազ. դրամ |
|---|---|
| **Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն** | |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | (9,423) |
| Տոկոսային ծախս | (27,415) |

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բաժնետերն ունի 164,863 հազար դրամ հաշվեկշռային արժեքով Կազմակերպությանը տրամադրված երաշխիքներ (2012թ-ին՝ 327,677 հազար դրամ), որոնք ծառայում են որպես ապահովություն այլ կազմակերպություններից ստացված վարկերի և փոխառությունների համար, որոնք բոլորը ենթակա են մարման 2014թ-ին:

Ստորև ներկայացված են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բաժնետիրոջ հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին տոկոսադրույքները, ինչպես նաև 2012թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

| | հազ. դրամ | Միջին տոկոսադրույք, % |
|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| Վարկեր և փոխառություններ | 519,234 | 15.00% |
| - ՀՀ դրամով | | |
| Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ | 2,205 | |
| Այլ պարտավորություններ | 1,130 | |
| **Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն** | | |
| Եկամուտ Բաժնետիրոջից՝ մատուցված ծառայությունների գծով | 2,523 | |
| Այլ գործառնական եկամուտ | 1,488 | |
| Տոկոսային ծախս | (99,537) | |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | (11,238) | |

# 21 Ֆինանսական ակտիվներ և պարտավորությունների իրական արժեք

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են կիրառելով դրամական միջոցների զեղչված հոսքերի մեթոդը դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի հիման վրա` օգտագործելով հաշվետու ամսաթվի դրույթամբ նմանատիպ պայմաններով գործիքի նկատմամբ կիրառելի զեղչման դրույքը:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելիս ղեկավարությունն առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով.

- բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդների և հաճախորդներին տրված վարկերից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար կիրառվում են համապատասխանաբար 7.3%-13.6% և 16.4% - 33.4% դրույքները,
- վարկերից և փոխառություններից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար կիրառվում են 4% - 14% դրույքները:

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվի ակտիվի վաճառքից կամ կվճարվի պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման արժեք` անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

Կազմակերպությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ դիտարկելի են կամ ուղղակիորեն (այսինքն` որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն` գների հիման վրա ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը` գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ` գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով:

| հազ. դրամ | 1-ին մակարդակ | 2-րդ մակարդակ | 3-րդ մակարդակ | Ընդամենը իրական արժեք | Ընդամենը հաշվեկշռային արժեք |
|---|---|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | 91,866 | - | 91,866 | 91,866 |
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | - | 46,119 | - | 46,119 | 46,119 |
| Հաճախորդներին տրված վարկեր | - | - | 10,249,256 | 10,249,256 | 10,249,256 |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | - | 5,008,193 | - | 5,008,193 | 5,008,193 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | - | 62,818 | - | 62,818 | 62,818 |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով:

| հազ. դրամ | 1-ին մակարդակ | 2-րդ մակարդակ | 3-րդ մակարդակ | Ընդամենը իրական արժեք | Ընդամենը հաշվեկշռային արժեք |
|---|---|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | 217,646 | - | 217,646 | 217,646 |
| Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ | - | 306,313 | - | 306,313 | 306,313 |
| Հաճախորդներին տրված վարկեր | - | - | 6,890,601 | 6,890,601 | 6,890,601 |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | - | 3,092,661 | - | 3,092,661 | 3,092,661 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | - | 58,479 | - | 58,479 | 58,479 |